Պատմության օլիմպիադայի դպրոցական փուլ (2025-2026 ուստարի)
11-12-րդ դասարան (տևողությունը՝ 90 րոպե)

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր՝
1/ Հայրենիքի փրկության կոմիտե 3/ Հայաստանի հեղափոխական կոմիտե
2/ Հայաստանի փրկության շարժում 4/ Հայաստանի օգնության կոմիտե

2. Ե՞րբ են հայ-վրացական ուժերն ազատագրել Դվինը:
1/ 1199 թ. 2/ 1203 թ. 3/ 1206 թ. 4/1209 թ.

3. Ե՞րբ է հիմնադրվել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան:
1/ 1935 թ. փետրվարի 1-ին 3/ 1936 թ. մարտի 24
2/ 1942 թ. ապրիլի 16-ին 4/ 1943 թ. նոյեմբերի 29-ին

4. Ե՞րբ է տեղի ունեցել Չմանկատուկի ճակատամարտը մոնղոլների և Իկոնիայի սելջուկյան սուլթանության ուժերի միջև:
1/ 1236 թ. 2/ 1242 թ. 3/ 1243 թ. 4/ 1253 թ.

5. Ո՞ր կաթողիկոսն է օծել Լևոն II-ին որպես Հայոց թագավոր:
1/ Գրիգոր Զ Ապիրատ 2/ Պետրոս Գետադարձ 3/ Հովհաննես Զ Սսեցի 4/ Ստեփանոս Դ Հռոմկլայեցի

6. Ո՞վ էր գլխավորում Գետաշենի հերոսական պայքարը 1991 թ.:
1/ Սիմոն Աչիքգյոզյան 2/ Թաթուլ Կրպեյան 3/ Արթուր Կարապետյան 4/ Վալերի Նազարյան

7. Ո՞ր բերդում էր ամրացել և դիմագրավել պարսիկներին Փառանձեմ թագուհին:
1/ Ամբերդ 2/ Բաղաբերդ 3/ Արտագերս 4/ Դարույնք

8. Որտե՞ղ է տպագրվել հայերեն առաջին տպագիր գիրքը:
1/ Վենետիկ 2/ Ամստերդամ 3/ Մադրաս 4/ Էջմիածին

9. Ո՞վ է արտահայտել հետևյալ միտքը պետական համալսարանի բացման ժամանակ.
«Մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը՝ փշրելու տգիտության շղթան»:
1/ Արամ Մանուկյան 2/ Հովհաննես Քաջազնունի 3/ Ալեքսանդր Խատիսյան 4/ Սիմոն Վրացյան

10. Ո՞վ Ռուսաստանում վերացրեց ճորտատիրությունը:
1/ Պյոտր I 2/ Եկատերինա II 3/ Նիկոլայ I 4/ Ալեքսանդր II

11. IV հզ երկրորդ կեսից Հին Եգիպտոսում ձևավորված տասնյակ փոքր պետությունները կոչվում էին.
1/ Նոմեր 2/ Պոլիսներ 3/ Կանտոններ 4/ Սատրապություններ

12. Անտանտի և Գերմանիայի միջև որտե՞ղ է կնքվել հաշտության պայմանագիրը:
1/Ժնևում 2/ Վերսալում 3/ Լոնդոնում 4/ Վաշինգտոնում

13. Ե՞րբ է կնքվել Վեստֆալյան պայմանագիրը:
1/ 1639 թ. 2/ 1644 թ. 3/ 1648 թ. 4/ 1683 թ.

14. Ընտրե՛ք իրադարձությունների ժամանակագրական ճիշտ դասավորությամբ տարբերակը:
ա/ Արշակ Արշակունու կազմակերպած խռովությունը բյուզանդական կայսեր դեմ
բ/ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև «հավիտենական» հաշտության կնքումը
գ/ Նվարսակի պայմանագրի կնքումը
դ/ Քաղկեդոնի IV տիեզերաժողովը
ե/ Անգղի և Զարեհավանի դեպքերը Վարդանանց պատերազմի ժամանակ
զ/ Հայոց տանուտեր Սահակ Բագրատունու և Վասակ Մամիկոնյանի զոհվելը

1/ ե, դ, զ, գ, ա, բ 2/ գ, ա, դ, բ, ե, զ 3/ բ, ա, դ, զ, ե, գ 4/ ե, բ, ա, զ, գ, դ

15. Ընտրե՛ք ճիշտ զույգերով տարբերակը:

1. Փարիզի խորհրդաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար	ա/ Արկադի Տեր-Թադևոսյան
2. Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) առաջին նախագահ	բ/ Ավետիս Ահարոնյան
3. Պարենային օգնություն ստանալու նպատակով ԱՄՆ մեկնած ՀՀ պատվիրակության ղեկավար	գ/ Հովհաննես Քաջազնունի
	դ/ Սիմոն Աչիքգյոզյան
4. Սյունիքի ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար	ե/ Գարեգին Նժդեհ
5. «Հարսանիք լեռներում» օպերացիայի հրամանատար	զ/ Հովհաննես Թումանյան
6. Մարտունաշենի պաշտպանության ղեկավար	է/ Թաթուլ Կրպեյան

1/ 1-գ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-ա, 6-է
2/ 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե, 5-է, 6-դ
3/ 1-զ, 2-գ, 3-բ, 4-դ, 5-ե, 6-ա
4/ 1-բ, 2-զ, 3-գ, 4-ե, 5-ա, 6-դ

Կարճ պատասխանով առաջադրանքներ:

<u>Ուշադրություն:</u> *Պարտադիր կերպով պահպանե՛ք տարբերակների հաջորդականությունը:*

16. Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը.

1/ Ափիոնի պատերազմների հետևանքով Ճապոնիան դարձավ արևմտյան տերությունների ազդեցության տակ գտնվող կիսագաղութի:
2/ «Արքայական ճանապարհի» կառուցումը, ինչպես նաև նավահանգիստներում մաքսատների տեղակայումը, Աքեմենյան տերությունում զարգացրեց առևտրական շրջանառությունը, մեծացավ պետական գանձարանի եկամուտը:
3/ Երկրորդ համաշխարհային պատերազմում Մեծ Բրիտանիայի կրած ահռելի տնտեսական կորուստներն ու պարտքերը նվազեցրին երկրի միջազգային ազդեցությունն ու ռազմական հնարավորությունները, ինչի հետևանքով այն այլևս ի վիճակի չէր պահպանել իր գաղութային տիրապետությունը:
4/ Ուինսթոն Չերչիլի՝ «երկաթե վարագույրի» մասին ելույթը Ֆուլտոն քաղաքում 1946 թ. պատճառ դարձավ Սառը պատերազմի:
5/ Աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքով Արևմուտք-Արևելք առևտրական ճանապարհները Միջերկրական, Բալթիկ և Հյուսիսային ծովերից տեղափոխվեցին Ատլանտյան, Հնդկական և Խաղաղ օվկիանոսներ:
6/ 1909 թ. երիտթուրքերը կարողացան իրենց ձեռքը վերցնել իշխանությունը, քանի որ Օսմանյան կայսրությունում լայնորեն տարածվել էր պանթյուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարները:

17. Ինչո՞ւ պատմական տվյալ պայմաններում չիրագործվեց Սևրի պայմանագիրը:

1/ Անկարայի քեմալական կառավարությունը չճանաչեց պայմանագիրը և վարեց այն ձախողելու քաղաքականություն:
2/ Խորհրդային Ռուսաստանը չկատարեց իր վրա դրված պայմանագրային պարտավորությունները:
3/ Թուրքիայի սուլթանական կառավարությունը երկրում այլևս փաստական իշխանություն չուներ:
4/ Երիտթուրքերը չճանաչեցին այդ պայմանագիրը:
5/ Դաշնակից երկրները ոչ միայն ճնշում չգործադրեցին քեմալականների վրա պայմանագիրը կատարելու հարցում, այլև համագործակցեցին նրանց հետ:
6/ Հայաստանը չստացավ Վրաստանի աջակցությունը:
7/ Հայկական երկու պատվիրակությունները միասնական չէին գործում:

18. Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները։

1/ Կիլիկիայում Հայ եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորելու կողմնակիցները կոչվում են ունիթորներ։

2/ Վրաստանում թագաժառանգի խնամակալության պաշտոնը կոչվում էր պայլություն։

3/ XIV դ. սկզբին մոնղոլա-մամլուքյան հակամարտությունն ավարտվեց մոնղոլների հաղթանակով և մամլուքներն այլևս վտանգ չէին սպառնում Կիլիկիայի թագավորության համար։

4/ 1937 թ. մարտին ընդունված սահմանադրությամբ Հայկական ԽՍՀ բարձրագույն օրենսդիր իշխանությունը կոչվեց Գերագույն խորհուրդ։

5/ 1956 թ. փետրվարի 14–ին Մոսկվայում բացված ԽՄԿԿ XX համագումարում Ն. Խրուշչովի զեկուցումը վերնագրված էր «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին»։

6/ ԽՍՀՄ-ի վերացումից հետո ստեղծվելիք նոր միությունը Մ. Գորբաչովի առաջարկությամբ պետք է կոչվեր ՄԱԿ՝ Միավորված Ազգերի Կազմակերպություն։

19. Նշված տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները։

1/Մեսրոպ Մաշտոցը՝ հայ դպրության հիմնադիրը, գրել է հոգևոր ճառեր, երգեր, հատկապես շարականներ։

2/ Մեսրոպ Մաշտոցը տառեր է ստեղծել նաև վրաց և Արաքսի ձախափնյա բուն Աղվանքի ցեղերից մազքութների համար։

3/ Վռամշապուհ արքայի նամակով Մաշտոցը ներկայանում է բյուզանդական կայսր Թեոդոսիոս III–ին, ստանում է նրա համաձայնությունը Արևմտյան Հայաստանում ևս դպրոցներ բացելու համար։

4/ Անանիա Շիրակացու կազմած թվաբանության դասագիրքը աշխարհում հնագույնների շարքին է պատկանում։

5/ Դավիթ Անհաղթն իր «Եղծ աղանդոց» երկում քրիստոնեական հավատքը պաշտպանել է հակադիր ուսմունքներից։

6/ Միջնադարի հայ իրավական մտքի գլուխգործոցը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» է, որը կազմվել է 1184 թվականին։

20. Նշված տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները։

1/ «Խալդյան դարպասի», որը հետագայում մեր ժողովրդի կողմից կոչվել է «Միհրի դուռ», արձանագրությունը կատարվել է Իշպուինիի և նրա որդու անունով։

2/ Երվանդ Սակավակյացի դաշնակիցը մարերի դեմ պայքարում պարսից արքա Կյուրոս II էր։

3/ Վաղարշ I-ից հետո Մեծ Հայքի թագավոր դարձավ նրա որդին, որով Հայաստանում հաստատվեց Արշակունիների ժառանգական դինաստիան։

4/ Զաքարյանների իշխանապետությունն իր մեջ ընդգրկում էր Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Արաքս գետի միջին հոսանքը, Սևանի շրջակայքը։

5/ Զաքարյանների մի ճյուղ հաստատվել էր Լոռու իշխանության կենտրոն Թմուկ (Թմկա) բերդում։

6/ Փիլարտոս Վարաժնունին, հենվելով հիմնականում խաչակիրներից կազմված զինուժի վրա, կարողացավ որոշ ժամանակ դիմագրավել սելջուկների առաջխա-ղացմանը դեպի հայկական իշխանության սահմանները։

7/ Խաչակիրների երկու բանակներ 1096 թ. մտել էին Կիլիկիա և ձեռնամուխ եղել Լեռնային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը։

8/ Մանազկերտի ճակատամարտից հետո սելջուկների մի մասը հաստատվել էր Փոքր Ասիայում և այստեղ ստեղծել իրենց պետությունը՝ Իկոնիայի սուլթանությունը։

Հանրապետական օլիմպիադայի
Հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան

03.12.2025 թ.